ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի ապրիլի 1-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար դյուրակիր համակարգիչների և բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 30.03.2024թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 01.04.2024թ. տրամադրված պարզաբանումը՝

<u>Հարցադրում</u>

«Հարգելի գործընկեր, Հրավերի Հավելված 1-ում նշված է՝ * Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ: Իսկ տեխնիկական բնութագրում՝ Պայմանագրի կատարման փուլում Վաճառողը Գնորդին պետք է ներկայացնի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ: Խնդրում եմ հստակեցնել, որ պահանջով պետք է առաջնորդվել ?»:

<u>Պարզաբանում</u>

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) ապրանքի գնման համար կազմակերպվող գնման ընթացակարգի հրավերի տեքստը հաստատելիս պայմանագրի նախագծի՝ Հավելված 5-ի «Տեխնիկական բնութագիր» Հավելված N 1-ում Համակարգի կողմից ավտոմատ կերպով գեներացվում է «*Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ» նախադասությունը, որը պատվիրատուի կողմից հնարավոր չէ խմբագրել, ուստի մասնակիցը հայտ ներկայացնելիս պետք է առաջնորդվի պատվիրատուի կողմից հրավերին առանձին ֆայլով կցված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ով սահմանված պահանջներով»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Աիդա Հովհաննիսյանին:

Հեռախոս՝ 010 511-774:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@court.am:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: